

նիսի Մանգասարհնց քաջ քարտողին, որ
ՀԲ տարի, ամառն և ձմեռն, գիշերն ու
ցերեկն ի գրիչ եկոց. որ գրեալ եղև ձե-
ռամբ նորա Խ Այսմաւուրք և Տարինգիրք.
Իսկ փոքր գիրք՝ Տեսր և Աղօթամատոյց,
Շարակնոց և Սաղմասարան, Մաշտոց և
Գանձատետր Մ-Կ, և այլ աւելի, և Աւե-
տարան ԼԲ: Եւ զայս Յոհան գլուխս ի
ծերութեան ժամանակիս, որ աչք չէր
հայիլ և ձեռքն կու դողայր, քաղում չոր-
չարանօք հազիւ կարաց աւարակել. և այլ
չկարաց գրիչ բռնել մինչ ի վախճան, որ
հանգեաւ ի Քրիստոս 22 ամաց:

Եւ արդ, Կա Ջաքարիայ աշակերտ նո-
րին դրեցի զԳլուխս գլուխն, և կարապետ
աշակերտ մեր գրեաց զՄաթէոս և զՄար-
կոս գլուխն».— Յիշա. ԺԵ. Դարի, Ա.
Մասն, էջ 587, ծնթ.:

Ըստ այսմ Յովհաննէս աշխատած է
72 տարի, և օրինակած է 40 Յայսմաւուրք
և Ճաշոց, 50-60 Աղօթամատոյց, Շարակ-
նոց, Սաղմասարան, Մաշտոց և Գանձա-
րան, և 32 Աւետարան. համագումար 122-
132 գիրք: Ասոնցմէ մեզի ծանօթ 25 հա-
տէն այժմ յայտնի են 15 հատ միայն, 1
Յայսմաւուրք, 1 Ճաշոց, 2 Շարակնոց,
1 Մաշտոց, 3 Գանձարան և 7 Աւետարան:
Սպասելի է սակայն որ այլ գործեր ևս ի
յայտ գան յառաջիկային: Այնուհանդերձ
վերագրեալ առեւանդները շատ որոշ գա-
ղափար մը կու տան մեզի մեր ձեռագրա-
կան կարուստներուն մեծութեան մասին:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ



“ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ ԽԻԿԱՐԱՑ Ի ՄԱՍՏՆՈՅ”

Հայերէն բնագրի մի նորայայտ
ընդօրինակութեան առնչութեամբ

Սոյն բնագիրը համաշխարհային ճա-
նաչման արժանացած հնագոյն երկերից է,
որը դեռ շատ վաղ ժամանակներից թարգ-
մանուել է բազմաթիւ լեզուների ու տրոհ-
ուել նոյնչափ և աւելի խմբագրութիւն-
ների ու տարբերակների: Հէնք ունենա-
լով Արեւելքի ժողովրդական, ընկերային,
անտեսական և հասարակական հորուստ
կենսափորձը, բաւարար գոհացում է աը-
ւել իրար յաջորդող սերունդների աշ-
խարհն ու կեանքն ըմբռնելու հետաքր-
քութիւններին և հոգե-բարոյական պո-
նանջներին. միաժամանակ, շնորհիւ իր
մաաչելիութեան, լեզուա-ոճակոյն իւրա-
յատկութիւններին, խրատական, ուսածա-
նման կերտւածքին, այն լայն տարա-
ձուճ է գտել ժողովրդական բոլոր խա-
ւերի մէջ: Այդպէս նաեւ՝ Հայաստանում,
դեռեւս Ե. դարի թարգմանիչների ջան-
քերով:

Սկզբնական, մայր բնագիրը երկու
և կէս հազարամեակից աւելի հին պատ-
մութիւն ունի: Նրան վաղուց ի վեր տն-
դրագրածել է միջազգային բանասիրու-
թիւնը՝ նրա ծագումը, յօրինման ժամա-
նակը, վայրն ու հանգամանքները, ազ-
բիւրագիտական վերլուծութիւնը, այլա-
լիզու թարգմանութիւններին առնչուող
հարցերը, իւրաքանչիւր լեզուի թարգ-
մանութեան մէջ բողբոջման խմբագրու-
թիւնների գոյացման պատճառներն ու
ուղիները և այլ կարեւոր գիտական, բա-
նասիրական խնդիրներ հետազօտելու և
պարզաբանելու համար:

Հայ բանասիրութեան մէջ ևս այն
արժանացած է լայն ուշադրութեան, Դա
բնական ու անհրաժեշտ իրողութիւն է,
որովհետեւ հայերէն թարգմանութիւնը,
ժամանակի ընթացքում նրա մէջ գոյա-
ցած խմբագրութիւնները, նրա առնչու-
թիւնները այլ լեզուներով կատարուած
թարգմանութիւնների հետ ու յարակից

չափ ալ հարցեր կարեւոր տեղ են գրաւում յիշեալ ընադրի քննական հետազոտութեան համար կատարուած աշխատանքներում:

Պատմա-բանասիրական և բնագրագիտական առումով մասնաւորաբար նշելի են Յ. Կոնիրերի, Հ. Յ. Տաշեանի ծառայութիւնները՝ բնագրի հրատարակութեան և առանձնապէս հայերէն թարգմանութեան հետ կապուած խնդիրները արծարծման ու դրանց գիտական քննութեան համար արուած միանգամայն լուրջ փորձերը: Հ. Յ. Տաշեանի ծառայուն հետազոտական մենագրութիւնը գիտական ստեղծապէս բարձր մակարդակ ունենալով հանդերձ, հեղինակի իսկ վկայութեամբ, մի վերջնաճիւղի հասած եզրակացութիւն է հանդիսանում, որովհետեւ իր ձեռքի տակ եղած ընդօրինակութիւնները աւելի նպաստաւոր հնարաւորութիւններ էին ընծայել:

Վերջերս, մի շարք նոր ընդօրինակութիւններ կ'հիման վրայ կատարած իր համակողմանի ու հանգամանալից քննական ուսումնասիրութեամբ հանդէս եկաւ Հայաստանի գիտնականներէից Ա. Մարտիրոսեանը: Նա երկու ծառայուն հատորների մէջ ամփոփեց քննական քննագիրը (A-B. C. D. E-F. և G. խմբագրութիւնների բաժանմամբ) և իր ուսումնասիրութիւնների միանգամայն լուրջ ու արժէքաւոր եզրայնագումները:

Սոյն բնագրի առ այսօր պահպանուած ընդօրինակութիւնները այնքան տարբեր ու այնքան բազմազան են թէ՛ կառուցուածքային, թէ՛ բնագրական տեսակէտից, որ ոչ միայն առանձին խմբեր կամ խմբագրութիւններ են ստեղծուել, այլև մի շարք տարբերակներ և ենթատարբերակներ: Առկայ խմբագրութիւնները ոչ միայն նոյնական չեն, այլև, կարելի է ասել, ոչ մի ընդօրինակութիւն միևնույն կրկնութիւնը չէ: Այս իրողութիւնը թէ՛ գիտական աւելի սուր անաբբօքսութիւն է առաջացնում, սակայն չափազանց լուրջ դժուարութիւններ է ստեղծում հաւաստի ու ամբողջական եզրակացութիւններ գոյացնելու համար: Բանասիրական, բնագրագիտական շատ հարցեր կ'ենթադրուեն, իրար խառնուած ու խառնուած,

մէկը միևսով երբեմն խիստ պայմանաւորուած ու չեն տարանջատուում: Խնդիրը միայն այն չէ, որ երկար ճանապարհ է անցել, բազում ընդօրինակութիւններ ունի (ինքնին բնական առիթ ու հնարաւորութիւն է ընծաւում տարբերակուելու և շեղումներ տալու, ինչպէս եղել է գրեթէ բոլոր այլ ձեռագրական բնագրերի պարագային): Իր առինքնող ու շահագրգռող բովանդակութեան, իւրայատուկ, բազում մանր հատուածների արհուած կառուցուածքի, բոլոր խաւերի ընթերցողներին մատչելի լինելու, առօրեայ դարձնական մարդկային յարաբերութիւնների մասին ունեցած ստորգ ու խելամիտ ընդհանրացումների, ոչ կանոնական հանդգտանքի, ուսուցողական ու դաստիարակչական չեղատակի միտման, և այս կարգի այլ պատճառներով այն անհամեմատ աւելի է ենթարկուել բազմաբնոյթ ու բազմահղ միջամտութիւններին, կորցրել է իր միասնական կերպարանքն ու գիծագիծը:

Նման դրութեան մէջ դժուարագոյն խնդիր է հանդիսանում մասնաւորաբար սկզբնական կամ՝ աւելի նախնական բնագրի, թէկուզ և խմբագրութեան, ճշտորոշումը, իսկ այդ, ինչպէս յայտնի է, գիտական, բանասիրական հիմնական խնդիր է:

Ա. Մարտիրոսեանը այս բարդայթիւնների մէջ ճիշդ է կողմնորոշուել, կարողացել է տարանջատել հիմնական խմբագրութիւնները, ներկայացնել դրանց բնագրական պատկերը, հասնել արժէքաւոր եզրակացութիւններին (թէկուզ երբեմն ոչ առանց պայմանականութեան), սակայն ոչ սկզբնական ստորգ բնագրի բացայայտման, մի բան, որ, թերեւ, հնարաւոր էլ չէ ներկայ փաստական նիւթերի և ձեռագրական ընդօրինակութիւնների հիման վրայ:

Այս առումով, խիստ անհրաժեշտ և օգտակար է ամէն մի նոր տուեալ, ամէն մի նորայայտ ընդօրինակութիւն, և թէ՛ անգամ դրանք ուշ ժամանակներից հասած լինեն մեզ, ևսական է, շատ աւելի է չեղուած դրանց շահեկանութիւնը, երբ

1 Տե՛ս մանրամասն՝ Ա. Մարտիրոսեան, «Գաղութիւն և Խրատք Իսկարայ Իմաստան», Հատար Ա, 1969, Երևան, Հատար Բ, 1972, Երևան:

աւելի հին են, մասուանդ, եթէ եղածնե-
րից ամենահինն է նկատի առնուած, ինչ-
պիսին է սոյն նորայայտ ընդօրինակու-
թիւնը: Այս ձեռագիր ընդօրինակութեան
մասին մենք առիթ ունեցել ենք գրելու
նախընթաց մեր յօդուածներից մէկում²:
Այստեղ զանց կ'առնենք վերստին անդա-
դառնալու դրան. նշենք միայն հետեւեալ
անհրաժեշտ իրողութիւնները: Ինքնին
խիստ ուշադրաւ ժողովածու է, հիմնակա-
նում՝ թարգմանական, մեծ ու փոքր բնո-
գրերի, կրում է 3195 թիւը: Թէև ճշգրիտ
թուագրութիւն չունի, օակայն հնագրա-
կան տուեալները ցոյց են տալիս, որ այն
ԺԳ դարու սկզբներին, նոյնիսկ, շատ
հաւանական է, ԺԳ դարու վերջերին պէտք
է գրուած լինի: Յամենայն դէպս, կոս-
կած լինել չի կարող, որ այն շատ աւելի
հին է, քան բանասիրութեանը առայսօր
յայտնի բոլոր ընդօրինակութիւնները,
սրոնցից վաղագոյնը Մաշտոցեան Մատե-
նագրարանի թիւ 2961 ձեռագրին է, 1321
թուականից: Այս ինքնին յատուկ նկա-
տառման արժանի գիտական - բանասիրա-
կան մի իրողութիւն է: Թէև յետագայ
ընդօրինակութիւնները երբեմն աւելի վաղ
բնագրական պատկեր կարող են ներկա-
յացնել, ընդօրինակուած լինելով հնա-
գոյն նախագաղափար մի օրինակից, սա-
կայն և այնպէս որեւէ աւելի հին ձեռա-
գիր աւելի չհնկան է. համեմատաբար
զերծ ու անաղարտ լինելով յետագայ մի-
ջամտութիւններից: Յատկապէս այս պա-
րագային, կրթ ստոյգ է, որ առկայ բո-
լոր ընդօրինակութիւններից ամենահինը,
ինչպէս նշուեց, հասնում է մինչև 1321
թ., իսկ յիշեալ ընդօրինակութիւնը
դրանցից աւելի հին է առնուազն մի քանի
սառնամեակ, եթէ ոչ մէկ դար և աւելի:

Բայց ոչ միայն այսքանն է Սոյն ըն-
դօրինակութեան բնագրական դեռևս ոչ
վերջնական համեմատութիւնն անգամ առ-
կայ ընդօրինակութիւնների հետ՝ շատ
հետաքրքիր պատկեր է պարզուած, նախ
ասենք, որ այն զգալի չափով տարբեր-
ւած է բոլորից անխափ և ունի առանձ-

նակի կառուցուածք: Թէ՛ ներածական
պատմողական մասով, թէ՛ բուն խրատ-
ների և թէ վերջաբան-պատմողականի բա-
ժինով ու «պատժիչ» խրատների մասով
ակնյայտօրէն տարբերուած է միւսներից:
Ծաւալով այլ է, խրատների յաջորդակա-
նութեամբ, միաւորների քանակով (ՃԼԶ
= 136) ու ներքին տրոհուածութեամբ՝
այլ: Այս ոչ միայն ընդհանուր առմամբ,
այլև առանձին միաւոր խրատներից կամ
միւս մասերից իւրաքանչիւրի պարագո-
յին ևս այդպէս է՝ տարբեր թէ՛ ծաւալով,
թէ՛ շարահարուածութեամբ: Մի հանգամանք
է սա, որն, անշուշտ, ընդգծում է յիշ-
եալ ընդօրինակութեան բնագրական հա-
մեմատելի ինքնուրոյնութիւնը: Ըստ
այսմ, մեզ անտարակուսելի է թուում, որ
այն ներկայացնում է ոչ միայն մի կա-
րեւոր տարբերակ, այլ մի ուրոյն և ու-
շագրաւ խմբագրութիւն:

Իսկ միւս, մեզ յայտնի ընդօրինա-
կութիւնների տարբերակների և խմբա-
գրութիւնների (նկատի առնենք Ա. Մար-
տիրոսեանի բաժանունները) հետ ունեցած
իր ընդհանրութիւնների ու նմանութիւն-
ների, սրունք, բնականաբար, շատ ու շատ
աւելի են քան տարբերութիւնները, նախ-
նական քննութիւնից իսկ հետեւեալն է
պարզուած:

Այն նմանութիւններ ունի բոլոր
խմբագրութիւնների ու տարբերակների
հետ անխափ (ինչպէս միւս ընդօրինա-
կութիւնները՝ մէկը միւսի նկատմամբ
փոխադարձաբար), բայց տարբեր հատ-
ուածներում, տարբեր չափերով: Այսպէս,
առաջին պատմողական մասում շատ աւելի
նման է G (դարձեալ համաձայն Ա. Մար-
տիրոսեանի բաժանման) խմբագրութեան,
թէև ոչ առանց նկատելի տարբերութիւն-
ների, քան C. D. և E-F. խմբագրութիւն-
ների համապատասխան մասերին: A - B
խմբագրութիւնը, ինչպէս յայտնի է, փոքր
հատուած է միայն պահպանել այս մասից,
ու թէև ակնառու նմանութիւն կայ եր-
կուքի միջև, բայց այդ փոքր հատուածը
բաւարար հիմք չի կարող ծառայել տրւե-
ալ դէպքում:

Երկրորդ, Բոն Խրատականքի մասով,
որ հիմնականն է, առաւելագոյն չափով

² Տե՛ս Միւնի, Թիւ Ա - Բ, էջ 25-28, 1979:

այն նման է A-B խմբագրութեան հոս-
մապատասխան մասին՝ թէ՛ խրատների
քանակով, թէ՛ նրանց յաջորդական շար-
քով, մասնաւորաբար ԺԶ-ՂԶ ընդարձակ
հատուածում: Այնպէսեւեւ այս մասում
A-B ի հետ նմանութիւնը նուազում է, և
խառն, անկոտնոյ նմանութիւնների մի
պատկեր է ստեղծուում A-B, C, G, և եւելի
դրական չափով նաեւ՝ D խմբագրութիւն-
ների համապատասխան մասերի համեմա-
տութեամբ: Դժուար է ուղղակի, անմի-
ջական կապ տեսնել նրա այս մասի և
յիշեալ խմբագրութիւնների նշուած մա-
սերի միջեւ: Աւելի դժուար է մտածել,
որ արտայայտ ընդօրինակութիւնը ծաղ-
կաքաղ է վերջիններից, ոչ միայն այն
պատճառով, որ այն աւելի հին է բոլո-
րից, այլ նաև այն պատճառով, որ նմա-
նութիւնները աւելի աղօտ կերպարանք
սենն ընդգրկական տեսակէտից, աւելի
կամ պակաս են իրար համեմատութեամբ՝
թէ՛ ծաւալով, թէ՛ իմաստով, նմանուող
խրատները շատ խառն, անհամապատաս-
խան յաջորդական տեղ են բռնում խրա-
տաշարքի այս հատուածում: Զուտ լեզ-
ուական տեսակէտից ևս դրանց միջև
տարբերութիւնը քիչ չէ:

A-B խմբագրութեան հետ նմանու-
թիւնը այնուհետև շարունակուում է վեր-
ջին—պատմողական և «պատմիչ» խրատ-
ների բաժնում: Այստեղ քիչ նմանութիւն
կայ G ի հետ, D ի հետ՝ համեմատաբար ա-
ւելի, բայց շատ նուազ, քան A-B ի հետ:

Ընդհանուր առմամբ, այս տախտիկ
կարելի է ասել նաև հետեւեալը. նորո-
յայտ ընդօրինակութեան բնորոշիչը չի
կրկնում որեւէ այլ բնագիծ, ոչ մի խմբ-
ագրութիւն ու տարբերակ, ոչ էլ այն-
քան մօտենում է նրանցից որեւէ մէկին,
որ կարելի լինի այն միացնել նրանցից
որեւէ մէկի խմբին: Թէև ամէնից առաւել
մերձաւոր առնչութիւններ սենի A-B
խմբագրութեան, յատկապէս սրտն պտու-
կանոց A5 ձեւագրի հետ, այսուամենայ-
նիս կարելի չէ այն միացնել նոյնիսկ
A-B խմբագրութեան: Երբ ասում ենք
այն չի կրկնում մեզ յայտնի որեւէ այլ
ընդօրինակութեան բնագիծ, նկատի ու-
նենք ծաւալը, կառուցուածքը, խրատների

քանակը, շարակարգը, ինչպէս նաև այն,
որ կան խրատներ, որոնք միւս խմբա-
գրութիւններում պահպանուել են կամ
ընդմիջարկուել յետադրում, իր մէջ՝
ո՛չ, և, հակառակը, իր ունեցած խրատ-
ներից ոչ բոլորը տակաւ են միւսների
մէջ: Խրատներ էլ կան, որոնք իր մէջ
ամբողջական են, մէկ միւսը են կազ-
մում, միւսների մէջ տրոհուած են, կամ
էլ մի քանիսը ձուլուած են մէկ ամբող-
ջական միւսերի մէջ: Այս պարագային
նկատի ենք առում նաև, ընդհանր է,
դրանց բովանդակութիւնը, որ նմանու-
թեան դէպքում իսկ նուազ կամ առաւել
չափով տարբեր է. նոյնական է ոչ յա-
ճախ: Լեզուական տեսակէտից ևս այն
սենի տարբերակուող յատկանիշներ:

Այս բոլորից առ այժմ կարելի է եզ-
րակացնել, որ նորայայտ ընդօրինակու-
թիւնը ընդգրկական և բանասիրական մեծ
հետաքրքրութիւն է ներկայացնում: Այն
մենակը առանձին խմբագրութիւն է կող-
մում, հանդիսանում է տեղայ խմբա-
գրութիւններից թերևս ամենաուշագրո-
ւը, բովանդակում է մեզ նախապէս առ-
ժանօթ բնագրական հատուածներ ու
խրատներ: Այն նպատաւում է միւս խմբ-
ագրութիւններին ու տարբերակներին
պատկանող ընդգրկի յետադարձուումնա-
սիրութեանը: Բնագրական լրացումների
ու ճշգրտման լայն նարաւորութիւն-
ներ է ընձեռում, բունասիրական որոշ
հարցերի նսր լուսարանութեանց տախ-
տիկոյ: Սայն ընդօրինակութեան յետա-
դարձ հանգամանալից քննութիւնը, որ
կատարելու ենք բնագիծը նրատարակու-
թեան յանձնելիս, միջ թուում է, աւելի
համոզիչ հիմք պիտի ապ ընդունելու,
որ այն ոչ միայն աւելի հին ընդօրինա-
կութիւն է, այլ աւելի վաղ է կազմուած,
քան մեզ առ այսօր յայտնի միւս խմբա-
գրութիւնները, և աւելի մօտիկ է բռն,
սկզբնական բնագրին:

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ